# Մայրենիի ֆլեշմոբ: Մարտ

4-5-րդ դասարաններ

Մուտք գործեք Google՝ ձեր կատարած աշխատանքը պահելու համար: Իմանալ ավելին

* Ցույց է տալիս, որ հարցին պատասխանելը պարտադիր է

Անուն, ազգանուն *

Վահան Չամսարյան

Նշի՛ր դպրոցը: *

Արևմտյան դպրոց

**1.Նշվածներից ո՞ր ծաղիկը որպես մարդու անուն չի օգտագործվում:**

- ( ) Վարդ
- (•) զանգակ
- ( ) Մանուշակ
- ( ) Հասմիկ

Ջնջել ընտրվածքը

**2. Տրված նախադասության մեջ թաքնվել են գույների երեք անվանումներ, փորձի՛ր գտնել դրանք՝ ուշադրություն դարձնելով տառերի հաջորդականությանը:**
*Կար մի րոպե, որ կարող էր թվալ, թե մենք կստանանք լուր թշնամու նահանջի մասին:*

կարմիր, ալ, լուրթ

*3. Երեխաները Զատկի տոնին զվարճալի պայքար սկսեցին հավկիթներից ուժեղագույնը գտնելու համար:*

**Այս նախադասության մեջ կա մի բառ, որն ունի համանուն տարբերակ, և կա մի բառ, որի հոմանիշը ունի ամսվա անունով համանուն տարբերակ: Գտի՛ր և բացատրի՛ր համանուն տարբերակները:**

Զատիկ-տոն, միջատ
մարտ- պայքար-ամիս

**4. Իսկ այժմ «այր» բառի համանուն տարբերակները փնտրի՛ր բառարանում և դրանցով կազմի՛ր նախադասություններ:**

այր-1քարանձավ, 2.տղամարդ     Երբ դեռ տու

**5. Մ (մեն) տառը զբոսանքի էր դուրս եկել անտառ և կանգնեց մի քարանձավի դիմաց: Ի՞նչ բառ ստացվեց (նախորդ առաջադրանքը կօգնի քեզ գտնել այդ բառը):**

մ+այր=մայր

**6. Իսկ ո՞ր բառի տնակում չի կարող բնակվել Մ տառը:**

- (●) Ա_բասիր
- ( ) Ա_բարիշտ
- ( ) Ա_բար
- ( ) Ա_բոխ
- ( ) Ա_բաստանյալ

Ջնջել ընտրվածքը

**7. Նշված բառերի դիմաց ավելացրո՛ւ մեկական տառ այնպես, որ նոր բառ ստանաս:**

*Արև, ամպ, պիտակ, կար, այլ, այծ, պար, տապ, արկ, արի*

բարև, լամպ, սպիտակ, նկար, փայլ, կայծ, շպար, շտապ, պարկ, տարի:

**8. Գուշակի՛ր հանելուկի պատասխանը:**

Մանուկն եկավ՝ պայծառ, անգին,
Կանաչ շորեր ունի հագին,
Թողեց հետքեր նա ամենուր,
Ծաղկով լցրեց դաշտն ու այգին:

գարուն

**9. Մայրիկիդ անունով աքրոստիկոս հորինի՛ր և տեղադրի՛ր այստեղ:**

Ձեր պատասխանը

**10. «Գիտե՞ք, որ գարուն է արդեն…» շարունակելով միտքը՝ հորինի՛ր պատմություն:**

Լուսնի պես կարևոր
Իմ աշխարհին ես դու
Լավ ամեն ինչում
Իմ փոքր աշխարհի մի մեծ երջանկություն
Թագուհին իմ կյանքի:

Առաջադրանքները կազմեց Անահիտ Հովսեփյանը: Շնորհակալություն:

Ձեր պատասխանը

Ուղարկել

Մաքրել ձևաթուղթը

Երբեք մի մուտքագրեք գաղտնաբառերը Google Ձևաթղթերում:

Այս բովանդակությունը չի ստեղծվել և չի հաստատվել Google-ի կողմից: Հաղորդել չարաշահման մասին - Օգտագործման պայմաններ - Գաղտնիության քաղաքականություն

Google Ձևաթղթեր